



ԱԼԱՎԵՐԴԻ ՕՐԶՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ
ԲՆԱՊԱՏՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF ALAVERDI

ԳԳ Լոռու մարզ, ք. Ալավերդի,
Ձորավար Անդրանիկի 8/1, 403 սենյակ
հեռ. (+374) 25324114, 91199324
էլ. փոստ info_alaverdi@earthus.am
arushhevoyan@rambler.ru

Loft Alaverdi,
Zoravar Andranik str. 8/1, 403
Tel. (+374) 25324114, 91199324,
E-mail info_alaverdi@earthus.am
arushhevoyan@rambler.ru

ՀՀ Առողջապահության նախարար
Պարոն Ա. Մուրադյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն նախարար,

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին, տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

Ալավերդու Օրհուս կենտրոն չեն դադարում ահազանգերը՝ բնակիչների առողջության վատթարացման մասսայական խնդրով, որոնք բոլորի մոտ նույնատիպ դրսևորումներն ունեն՝ աղիքային պրոբլեմ, ջերմություն, գլխացավ, թուլություն: Ալավերդու բժշկական կենտրոնից տեղեկացել ենք, որ ինֆեկցիոն բաժանմունքը այդ առումով մեծ ծանրաբեռնվածություն չունի, աշխատում է սովորական ռեժիմով:

«Հայջրմուղկոյուղու» Ալավերդու տեղամաս այցելությունից իմացանք, որ ահազանգերի հետքերով բնակարաններից նմուշառված ջրի մանրէաբանական լաբորատոր անալիզների արդյունքում շեղում չի հայտնաբերվել:

ՀՀ Առողջապահության նախարարության Լոռու մարզային կենտրոնի բժիշկ-հիգիենիստի տեղեկացմամբ կատարվել են հետազոտություններ և մինչ այս պահը, ազգաբնակչությանը մատակարարվող խմելու ջրի հետ կապված մանրէաբանական և քիմիական նորմատիվային խախտումներ և շեղումներ չկան:

Սակայն, անընդհատ ավելանում է վերոհիշյալ առողջական խնդիրներով մարդկանց թիվը: Զպարզված խնդրից հասարակությունը անհանգստացած է և հայտնվել է խուճապային իրավիճակում:

Սնդրում եմ Ձեր պարզաբանումը և միջամտությունը բնակչությանն անհանգստացնող հարցը ճշտելու և հիվանդացության պատճառը հայտնաբերելու համար:

Շնորհակալություն:

Հարգանքով՝ Ալավերդու Օրհուս կենտրոնի համակարգող
13.08.2015թ.

Անուշ Էվոյան